

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂՈՌՈՒԽՁՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՍՏՄՈՂԵՌՈՒԽՁՄ \*

Տաթկիկ Սողոմոնյան

Բանալի բառեր՝ մոդեռնիզմ, պոստմոդեռնիզմ, միջտեքստայնություն, աբսուրդի գրականություն, հեգնանքի փիլիսոփայություն, խաղ տեքստի հետ, պարադոքսի գեղագիտություն, տեքստի բազմապահանություն, տեքստի երկակի կողավորում, տեքստի քայլայում:

Քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած քաղաքական, սոցիալ-տնտեսական իրադարձությունները և, հիմնականում, առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած քառային իրավիճակները որոշակի ազդեցություն թողեցին մարդկանց հոգեկանի վրա, փոխեցին նրանց հոգեքամությունը, նորածելակերպը, աշխարհին կալման և աշխարհազգացական սկզբունքները: Դարակազմիկ անցքերն իրենց յուրօրինակ արտահայտությունը գտան գիտական, փիլիսոփայական ու գեղարվեստական ոլորտներում, մտային համակարգը ենթարկվեց էական վերանայումների: Դրան նպաստեցին նաև Նիշշեհի դիվային էսթետիզմը, Զ. Ֆրոյդի հոգեվերլուծությունը, Յունգի անալիտիկ հոգեքանությունը: Գրական դաշտում հայտնվեցին Ծառլ Բոդերը, Արթուր Ռեմբոն, Էդգար Պոն, որոնք նորովի գնահատեցին գրականության դերն ու նշանակությունը և, ամենակարևորը, էականորեն նոր սահմանում տվին նրան: Ի՞նչ է գրականությունը, ո՞րն է նրա գիշավոր գործառույթը: Գրականության մեջ քննության արարկա դարձավ մարդոր՝ որպես ենթագիտակցական շերտ, խոսվեց այնային երևույթների մասին, որոնք մինչ այդ քննարկման առարկա չէին դառնում: Հերոս-կերպարը դարձավ մարդ-կերպար, սովորական կերպար, տարբեր կողմերով քննելի, ավելի շատ օբյեկտ, քան սուբյեկտ: Ժամանակի զարգացումները, ներքին ու արտաքին մոլուցացմանները առաջ են քաշում առաջընթացը պայմանավորող երթեմն հակասական միտումներ, որոնք, սակայն, ապահովում են վերընթացի ընդհանուր ներդաշնակություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, օրինակ, գրականության մեջ՝ արսուրդային դրամատիզմի համատեքստում, ծևավորվեց Գարսիա Մարկեսի մոգական ռեալիզմը՝ որպես հավերժական վերաբարձի արտահայտություն:

«Աստված մեռել է, Աստված այլևս մեզ հետ չէ» նիշշեական բանաձևումները խախտեցին աշխարհի և մարդու հարաբերակցության սահմանները: Մարդոր կարծես օտարվեց իրականությունից (Կաֆկա, Քայլու): Դասական գրականության սահմանումներն ու օրենքները կազմակութելով՝ գրականությունն արտահայտման նոր ձևեր ու թեմաներ գտավ՝ դաշնալով տիեզերքը (Աստված) մարդու հետ կապող օղակ: Այս համատարած հորեւտեսության, ապագայի հանդեպ անհուսության, դասական գրականության իդեալների նկատմամբ դրսարձությունը քանակական մոտեցումների մթնողություն ստեղծված գրականությունն անվանվեց մոդեռնիստական, այսինքն՝ արդիական, ժամանակակից մարդու հոգեքանությամբ համապատասխան:

Ավելորդ չենք համարում նշել մի հանգամանք ևս. 1941թ. մահացան մոդեռնիստական գրականության մեջ հեղաշրջիչ դեմքեր հանդիսացող Զեյմս Շոյսը և Վերջինյա Կոլֆը: Հենց այդ տարեթիվն էլ սահմանագծային դարձավ մոդեռնիզմի և պոստմոդեռ-

\* Հոդվածն ընդունվել է 18.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայոց լեզվի գրականության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՇՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նիզմի (հետմոդեռնիզմի) միջև: Ուղղությունը զարգացման նոր փուլ թևակոխեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ճարունակելով իր նախորդ գրական ուղղությամբ՝ պոստմոդեռնիզմը ձևավորեց գրական նոր դաշտ, նոր իրականություն, նոր հերոս և նոր ընթերցող: Պոստմոդեռնիզմի հիմնական առավելությունն ու վարակիչ ազդեցությունն այն է, որ այն մարդակենատրոն է, խոսվում է մարդու ներաշխարհի մասին, մարդու ենթարկվում է հոգեբանական վերլուծության:

Պոստմոդեռնիզմի շրջանին բնորոշ է գեղագիտական համակարգի ավարտվածության, ամբողջականության վերաբերյալ պատկերացումների քայլայումը, իրաժառումը սահմաններից ու տարուներից: Գրականության կիզակետ դարձավ ժամանակակից մարդու հոգեբանությունը, զգայական աշխարհը: Գրականությունը դարձավ եսակենտրոն, գրեցին օրագրեր, նամակներ, հսեններ:

Նոր որակ ձեռք բերեց հեղինակ-հերոս-ընթերցող հարաբերությունը: Հեղինակը կարծես երկրորդ պլան մղվեց՝ կարևորելով տեքստ-ընթերցող կապը, քանզի «ընթերցողի ծնունդը պետք է հասուցվի Հեղինակի մահվամբ» [1]:

Պոստմոդեռնիզմը, որպես նոր տերմին, իր վերջնական սահմանումը չունի, ինչպես Արտեմ Հառությունյանն է մի հարցազրույցի ժամանակ նշել՝ մամիփեստ չունի: Պոստմոդեռնիզմ է անվանվում այն, ինչ ստեղծվել է մոդեռնիզմից հետո [2]: Երբեմն պոստմոդեռնիզմ են համարում այն, ինչ հնարավոր չէ հասկանալ:

Արմեն Շեկոյանը գրել է. «Ես պոստմոդեռնիզմ երևույթը չեմ հասկանում մանավանդ գրականության մեջ և մանավանդ Հայաստանում, որովհետև պոստմոդեռնիզմին պարտադիր պիտի մոդեռնիզմը նախորդած լիներ: Այն ինչ է եղել և մեր սովորական գրականության մեջ, ոչ թե մոդեռնիզմ էր, այլ՝ ընդունված ավանդույթից մի փոքր շեղում» [3]:

Այսուամենայնիվ, պոստմոդեռնիզմի տեսարանների կողմից (Թեորիո Արոռն, Սիշել Ֆուկո, Ժակ Ներիդ, Ռոլան Բարտ) մշակվել են որոշակի առանձնահատկություններ, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև հայ գրականության մեջ:

Անցյալ դարի 60-ական թվականներին հայ իրականության մեջ ասպարեզ եկավ գրական նոր սերունդ, որն իր հեղափոխական տրամադրություններով ու գեղագիտական դավանանքով գրական նոր շրջափուլ ձևավորեց, այսուել կարևոր դերակատարություն ունեցավ նաև Պարույր Սևակի «Հանուն և ընդդեմ ռեպարտի նախահիմքերի» հոդվածը: Սերունի ներկայացուցիչները (Հրանտ Մաքարյան, Պերճ Չեյթունցյան, Աղասի Ավագյան, Վարդգես Պետրոսյան, այնուհետև այս համայնապատկերում հանդես եկան նոր դեմքեր՝ Հովհաննես Գրիգորյան, Արտեմ Հարությունյան, Հենրիկ Էրյան, Վարդան Հակոբյան, Դավիթ Հովհաննես, Հակոբ Սովսես, Արմեն Մարտիրոսյան, Գուրգեն Խանջյան), համաշխարհային գրականության զարգացումներին գուգրնաց, նոր ուղի բացեցին՝ արձակն ու պոեզիան հարստացնելով մոդեռնիստական թարմ մտածողությամբ ու լեզվառական ծևերով:

90-ական թվականներին՝ Հայաստանի անկախացումից հետո, վերանայվեցին գրական ուղղություններն ու արժեքները: Գրական դաշտի առաջատար ներկայացուցիչները, ինտեգրվելով համաշխարհային մտքի առաջընթացին, «հայտնվեցին» հետմոդեռնիստական ուղղության մեջ:

Պոստմոդեռնիզմի դրսևորումները գեղարվեստական կառուցակարգի մեջ «ներկայանում» են մի շարք հենակետերի վրա.

ոճի դիտավորյալ դժվարացում,

հատվածայնություն,

հեգնանք,

միջտեքստայնություն,

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

իսաղի առկայություն,  
համաշխարհային մշակույթի պատմության և նրա վերահիմաստավորման վրա  
հիմնավորվածություն,  
տեքստի մեջ ժամանցայինի և գերինտելեկտուալ շերտի համադրում,  
նոր տիպի ընթերցողի ստեղծում,  
կերպարի համանարդկայնացման սկզբունք,  
երկակի կողավորման հնարի կիրարում...

Թվարկումների այս շարքը կարելի է ամենդիատ ձգել:

Պոստմոդեռնիզմի ընդհանուր դիմագծերն են՝ խճանկարայնությունը, ոճական բազմազանությունը, մեջբերումների փնտրությունը և այլն: Էական տարբերություններով հանդերձ՝ այն ինչ-որ տեղ կարծես շարունակում է մոդեռնիզմի որդեգրած գեղագիտական հնարանքները և պատահական չէ, որ մոդեռնիզմին հարած շատ ստեղծագործողների մոտ նկատվեցին պոստմոդեռնիստական տարրեր: Անդրադարձ կատարելով մեր անվանի պոտենցիալ ստեղծագործություններին՝ փորձենք ցույց տալ, թե մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի այս կամ այն առանձնահատկությունը ինչպիսի դրսեւում է գտնել ժամանակակից քնարերգության մեջ:

«Պոեզիան այսօր խոսել է նշանակում (առաջ երգել)», - իր գեղագիտական դավանանքն այսպես է բնութագրել Հովհաննես Գրիգորյանը՝ կարծես ուրվագծելով իր բանաստեղծության հետագա զարգացման ընթացքը: «Հովհաննես Գրիգորյանը, - գրում է Հ. Ստեփանյանը, - այն քչերից է, որ մերքուստ համոզված է՝ գրականությունը թեև կապված է օրվա հետ, այնուամենայնիվ, ապրում է իր ինքնուրույն կյանքով և ունի իր ապրելու ու մեռնելու ժամանակը... ահա թե ինչու Հովհաննես Գրիգորյանը մեծ վերափոխությունների, կտրուկ շրջադարձի անհրաժեշտություն չունեցավ, շարունակում է գրել ու ապրել այնպես, ինչպես գրել և ապրել է երբեք, անշուշտ, խորացնելով ու ընդլայնելով ոճական նորերանգները, թեմատիկ բազմազանության սահմանները, առավել գումագեղ դարձնելով բանաստեղծական այն խիստ հնքնատիպ՝ գրիգորյանական աշխարհը, որը չես շիտքի մեկ ուրիշի հետ...» [4]:

Գրել այնպես, ինչպես խոսում են... Կարամգինյան մտածողության ու ոճի կմիջքը կրող գրական այս սկզբունքը մեզ համար նորույթ չէ, բայց կիրառման ծևերը կատարելագործվում են ժամանակի մեջ: Հովհ. Գրիգորյանի պատումային բանաստեղծություններում առկա է նյութը հեգնանքով մասուցելու երևույթը, հեգնանք, որի տակ թախիծ և նույնիսկ ոդքերգություն է թաքնված, ոյուրին ու թեթև բառնված, դուրս կատարելով խոսվում է ամենադժվարի մասին:

Ես գիտեմ՝

Կմեռնեմ ծմբան առաջին օրը:

Մարդիկ կրթիքացնեն ոտքերը սառած

Եկ զարմանքով կմայեն,

թե ինչպես է ծյունը հալվում իմ սառած դեմքին:

Ծերացած կինս կորոնի

և չի գտնի վառարանի ունելին՝

կատվին սենյակից դուրս քշելու համար,

հետո կնստի-կօրորի գուխը՝

քմահած կատվի և իմ անխոհեմ քայլից ընկճված:

Քույրս թեյ կրամանի մրսած հյուրերին

և ազատ ծեռքով կուղղի

կոժքիս դարսված չորացած ծաղիկները...[5]

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Այս տողերում նկատելի է նաև «գեղարվեստական տեքստի հետ խաղը», արտաքին սարը թվացող տրամադրության տակ բաքնված է կյանքի իրական ողբերգությունը:

Գրողի գործերում կյանքի և մահվան իմաստնացած հաշտություն կա՝ նույնպես շաղախված հեզմանքի փիլիսոփայությամբ («Հորելյանական իրադարձություններ», «Նամակը»): Հովի Գրիգորյանի պոեզիայում ակմիայտ է նաև ձևի բայրայումը: Բանաստեղծը, ինչպես Ս. Աբրահամյանն է նշում, Պարնասից մտել է փողոց և իրեն ապահով է զգում քանդելով բանաստեղծության պայմանական սահմանները: < Գրիգորյանն առօրյա լրատվական իրադարձությունների համատեքստում խորքային խնդիրներ է արձարծում («Նախընտրական խոստումներ», «Դեմոկրատիա»):

Արդի հայ գրականության մեջ իր ուրույն լեզվամտածողությամբ առանձնանում է Վ. Հակոբյանը: Խոսելով պոստմոդեռնիզմի էական հատկանիշներից մեկի՝ ձևի բայքայման մասին՝ չենք կարող չխոսել Վ. Հակոբյանի պոեզիայի մասին: «Ընդհանրապես, - գրել է Վ. Հակոբյանը, - դժվար կտեղավորվեմ որևէ «սեսականի» տակ: Ես խորվ մարդ եմ... իմ նյարդերի վրա կյանքը շատ է նվազում, ես ինձ մշտապես հանդիպում եմ ծայրագոյն պահերի մեջ, երանա կիզակեռում...» [6]: Սակայն, Սարիմյանի բնորոշումը վկայակոչելով, նշենք, որ Հակոբյանի պոեզիան տալիս է ոչ թե իրականության պատկերումը, այլ պատկերացումը: «Բարեն անջատվում են նյութական խոտությունից և նույնանում երևակայությամբ կրահվող խորհրդանշի հետո» [7]: Այս բնորոշումը հիմք է տալիս ասելու, որ Հակոբյանի պոեզիան իր պոետիկայով հարում է, այսպես ասած, նեռսիմվոլիզմին (նոր խորհրդապաշտությանը): Զնակողնում է բանաստեղծության կառուցվածքը, բնագրի տրամաբանական ամբողջությունը տրոհվում է ինքնուրույն պատկերային միավորների:

Ոտնահետքեր ջրի վրա

Սիրում եմ մենակ գնալ ճանապարհը: Եվ սիրում եմ  
չհասնելը,

քանի որ հասնելու մեջ

խարկանք կա, անշոշտ,

չէ՝ որ աշխարհի ոչ մի ճանապարհ վերջ չունի:

Արժիվը ճախրում է հայոց քարոտ կապույտներում,

բարձր-բարձր, և ես

Նյու-Յորքի փողոցներում, յոթ երկնքի տակ ու յոթ լեռան

ետևում անգամ

զգում եմ նրա

թևերի քամին ճակատիս վրա: Լացելու ցանկությունից  
սկսում եմ երգել,

Արևի ետևից վագող օրերը մնացել են խավարում,

Պահիր ինձ հիշողությանդ մեջ, աղբյուր:

Լույսը մաքառնան զավակն է, որ իշել է Գանձասարի

սուրբ խաչի վրա,

Եվ սակայն, ենթատեքստի մեջ տիխուր օրերի

ծյան փաթիլներ կան: [8]

Ով կարող է կրահել, թե բանաստեղծությունն ինչ կապ ունի վերնագրի հետ և կամ ինչ տրամաբանական կապ ունեն բանաստեղծության իմաստ տվյալ առարկայությունները միմյանց հետ: Հենց սա է արդի բանաստեղծության էական առանձնահատկությունը, ձևի բայրայումը: Գրական սկզբունքներ, որոնք գեղագիտական նոր տարրերի

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Կազմավորման հիմքում ամբողջամում են՝ որպես գաղափարական այլախոհության նորույթ՝ անկանխակալ ըմբռնումների համատեքստում ինչ-որ չափով տեղ տալով նաև իր անտիմենեսիսյան այն տրամադրություններին, որոնք բացառում են բնության ոչ խորքային, հոգեբանությունից կտրված նմանակման ցանկացած միտում:

Պոստմոդեռնիզմին հասուու է նաև ժանրերի խաչասերումը, որը նոր ձևեր է ծնում: Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծարիկներ» վիպասարք ժանրերի միահյուսման հրաշալի օրինակ է: Ասքի չափածո դադարները տաղաչափական բեկում են նշանավորում և իմաստային խոր շերտեր հայտնաբերում ենթաբնագրի անհայտներում:

Լեզվական կառուցում ևս Վարդան Հակոբյանի պոեզիան բարդ ու անսովոր անակնկալներ ունի: Երբեմն նա կարծեն խաղում է բարի հետ, նրա բարը, ինչպես ասվում են, երբեմն այլասերում է լուրջունը, «Երբեք բարով ոչինչ չի ասում, լուրջամբ բարը խորանում է».

Բարի հետ գործ ունեցիր բարից դուրս,

Բարը ինչ-որ տեղ ճշգրիտ ստորկացում է: Եվ

գուցե մի մեծ, անսահման մեծ, բայց և,

այնուամենայնիվ, վանդակ է տիեզերքը: [9]

Գրականագետ Արքմենիկ Նիկողոյանը, ընդգծելով Վ. Հակոբյանի պոեզիայի պարադրուի գեղագիտությունը, գրել է. «Այդ կերպ՝ առարկայորեն վկայագրվում են նորացման և բարդությունները, և ստեղծագործական համույթը: Պարադրուի գեղագիտությամբ Հակոբյանը նախ և առաջ ձգուում է իրերն ու երևոյթները ազատագրել ավանդական կաղապարներից»: [10]

Երևույթի հանդեպ հեգնանքի և հումորի արտահայտություններ ևս կան Հակոբյանի պոեզիայում. («Կոնդրիխա Ռայսը Ղարաբաղում»):

Իսկ Հաբի պապս, որ հին արցախցի է, ու մի քիչ նման է Հորին,

մեկ-մեկ հեռառւստացուցով դիտում է Կոնդապահա Ռայսի

մասին հալորդումները, նրան նայում

ու ասում է՝ լավ հարս է, խոսք չունեմ, բայց ափսոս,

երևում է դեռ կարգին տղամարդու ծեռք չի ընկել...[11]

Պոստմոդեռնիզմի իմստերտեքստային բնույթը ամեններն էլ խորթ չէ Հակոբյանի պոեզիային, որի դրսարումների մասին արձանագրել է գրականագետ Ալյա Խառատյանը՝ խոսելով «Երգը որպես հանդիպման վայր» գրքի մասին, միջտեքստայնությունը Վարդան Հակոբյանի պոեզիայում դառնում է 21-րդ դարի մարդու աշխարհայացքի արտահայտման և արտացոյնան ձև. «Լավ է տող չի իմ, բան՝ տողատակ...»:

«Պոեզիան ընդգրկում է ամեն ինչ, չունի ոչ սահման, ոչ էլ օրենքներ» [12]: Այսպես է արտահայտվել Արտեմ Հարությունյանը՝ հայ բանաստեղծության համար նոր սահմաններ ու օրենքներ գծելով, հյուսելով, ինչպես ակադեմիկոս Սարինյանն է նշում, «քաղաքականության ու քաղաքակրթության, պատմության ու առասպելի, փիլիսոփայական խոհն ու օրերի ժամանակագրությունը, ազգի ճակատագրի ու մարդկության անկումի ողբերգական տագնապը» [13]:

Ես դեռ չեմ վերադառնել երկիրս,

թափառում եմ արյանս բաց երակներով,

Տեսնում հրդեհը հինավորց հողի: [14]

Համաշխարհային մշակույթի պատմության և նրա վերահմաստավորման վրա հենքածությունը, տեքստի բազմապատճեն կազմակերպումը, տեքստի մեջ իմստելեկտուալ շերտի ներմուծումը հասուլ են Արտեմ Հարությունյանի ստեղծագործական խառնվածքին: Նա ժամանակագրի է, և ժամանակագրության առանցքն Արցախ-Հայաստան-

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Աշխարհն է, դիտակետը՝ «Ծուշի» և «Բարելոն» հյուրանոցների աշտարակները: Նրա հերոսը որքան էլ ազգային, ունի համամարդկային գաղափարներ: Առանց համամարդկայնացման սկզբունքի՝ բանաստեղծը չի կարող այդպես հախուռն խոսել անկախության, Արցախի ազատագրական շարժման հաղթանակի, հետպատերազման վայրիվերումների ու անորոշության մասին:

Համարդելով համաշխարհային և հայ բանաստեղծության արդիական նվաճումները՝ Արտեմ Հարուրյունյանը ստեղծում է իրենը.

... պոեզիա, ուր ամրագրված է ամենուր,

Արցախի թթենու սաղարթի պես շատրվանող  
հղոր տեսիլքով,

ամենուր, ուր մարդող փորձում է ապրել

պետության անհեթեր ծախսերի փստող բեռան տակ:

Պոեզիա, ուր առանձին ծև է

քաղաքականության և ֆանտաստիկայի

և երևակայության սուրաչվի ռենտգենի,

որ ստիպում է ամեն ինչ վերստեղծել նորից... [15]

Տեքստի բազմաշերտ կազմակերպմամբ արդի հայ գրականության մեջ առանձնանում է Հնարիկ Էդոյանը: Ազատ բանաստեղծության կողավորումներով նա ընդգծում է լեզվամտածողության հոգեբանությունն ու տեքստի կարևորությունը: Ժամանակակից բանաստեղծության մեջ ընդգծվում են նաև տեքստի հետ խաղը: Ոճային այդ առանձնահատկությունն առկա է նաև Հրանտ Ալեքսանյանի պոեզիայում.

### Սպիտակ շրջան

Ամեն «սև թուղթ» չէ վմիր մահագիր:

ԱՄԱՀԾ կյանքի պես խայտարդես է, բազմալեզու և:

Ամեն «սև արկղ» կործանման խոսնակ չէ:

Լթեկուզ ավիատեսու չի լրագծվում ծայնագրությամբ:

Ամեն «սև անցք» չէ տիեզերքի անդունու:

Արտի վիհերը երից անտակ են/:

Ամեն «սև ռասսա» օտարման գանգված չէ:

/Տերը երգում է նեգրական խոպտ բաս բարիտոնով/:

Ամեն «սև հոգի» չէ չարության մառան: [16]

Հետմողերնիստական շրջանի մշակույթում, կապված նոր մտածողության, արժեքների վերափոխման, հերոսի, հեղինակի տեքստի վերանայման հետ, փոխվեց նաև գեղարվեստական լեզվի բարօպապաշարը: Լեզվի հասարակայնացման հետ առաջ եկան գոելիկարանություններ, որոնք նպաստակ ունեն գրականություն բերելու ժամանակակից կյանքի իրականությունը՝ առանց ավելորդ գունազարդումների: Այս երևոյթին մտահոգությամբ արծագանքեցին ավագ սերնդի գրականագետներից շատերը: Ս. Սարինյանն այս առիթով նշել է, որ այսօր պոեզիան կարծես հոգու անզգայության էրոտիկ դեգերումներից այն կողմ չի անցնում [17], իսկ Դավիթ Հովհաննեսը գրել է. «Մեր սում քաղաքականությունն ու կենցաղը, բարձրն ու ցածրը, հարատևն ու անցողիկը խառնվել են իրար... Եվ այդ ամենի համարժեք բանաստեղծական արտացոլումը պահանջում է համարժեք լեքսիկա: Կուգենայի, որ ընթերցողը նաև այս ստեսանկյունից հասկանար և ընկալեր այն «անբանաստեղծական» արգիլալ բառերն ու արտահայտությունները, որոնք կարող են համկարծ բարձրացնել անհնագանդ գլխիկը ստողատակից և խախտել բարեպաշտ քաղբենու ականջաթաղանթի կուսությունը. բայց հոչենք թողնի որ բարը քնի բառարանում [18]:»:

## **ՄԵՆՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016**

Մենք փորձեցինք հոդվածում անդրադառնալ մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի տեսական խնդիրներին, ժամանակակից հայ գեղարվեստական մտքի զարգացման գործում ունեցած նրա դերին ու նշանակությանը, այսպես ասած, այդ «իզմերի» հայկական բնավորությանն ու առանձնահատկություններին՝ գրականության ընդհանուր մեթոդոգիայի համապատկերում:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ**

1. Հերոսի մահը, Ռուլան Բարս, «Եղիցի լույս», 2012, N12, էջ 3:
2. Ժуրավլև С., Постмодернизм в литературе, ru. wikipedia.org/wiki.
3. www.granish.org
4. Գրիգորյան Հ., Հրեշտակներ մանկության երկնքից, Եր., 1992, էջ 5:
5. Նույն տեղում, էջ 45:
6. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփ., «Դիզակ պյուս» հրատ., 2008, էջ 189-190:
7. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք III, Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 511:
8. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Բ, Ստեփ., «Դիզակ պյուս» հրատ., 2007, էջ 15:
9. Նույն տեղում, էջ 132:
10. Նիկողոսյան Ա., Փակիր աչքերող, չերևաս, Եր., 2011, էջ 7:
11. Նույն տեղում, էջ 83:
12. Արդի հայ պոեզիա, ՀԳՄ հրատ., Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2008, էջ 7:
13. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, հատոր 4-րդ, 2004, էջ 432:
14. Հարությունյան Ա., Հեռուստապեններ Շուշի և Բաբելոն հյուրանոցների աշտարակից, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2010, էջ 89:
15. Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Եր., «Ապոլոն» հրատ., 1997, էջ 106:
16. Ալեքսանյան Հ., Շառաչը մայրաշխարհի, Ստեփ., «Ոգի Նախրի» հրատ., 2012, էջ 444:
17. www.cultural.am.
18. Հովհաննես Դ., Նոր քրոնիկոն, Եր., «Արևիկ» հրատ., 2007, էջ 458:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հայկական մոդեռնիզմ և հայկական պոստմոդեռնիզմ  
Տաթևիկ Սողոմոնյան**

Հոդվածում քննության առարկա է 20-րդ դարի սկզբին հանդես եկած նոր գրական ուղղությունը՝ մոդեռնիզմը և նրա արտացոլումը հայ հրականության մեջ: Ուսումնասիր-վուն են արդի հայ գրականության ներկայացուցիչների առանձին գործեր, որոնց մեջ առավելապես ընդգծված են մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի տարբերակիչ առանձնահատկությունները:

Ներկայացվում են նաև մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի տեսական խնդիրները, նրանց դերն ու կարևորությունը արդի հայ քնարերգության մեջ:

**РЕЗЮМЕ**

**Армянский модернизм и армянский постмодернизм**  
**Татевик Согомонян**

**Ключевые слова:** модернизм, постмодернизм, литература абсурда, философия иронии, игра жанров, эстетика парадокса, многоплановость текста, двойное кодирование текста, разрушение текста.

В этой статье мы рассматриваем новое литературное направление – модернизм, возникшее в начале XX в., и его отображение в армянской реальности. Рассматриваются отдельные работы представителей современной армянской литературы, в которых особо подчеркиваются отличительные черты модернизма и постмодернизма. Делаются попытки рассмотреть теоретические проблемы модернизма и постмодернизма, их важность и роль в развитии современной армянской лирики.

**SUMMARY**

**Armenian modernism and Armenian post-modernism**  
**Tatevik Soghomonyan**

**Keywords:** modernism, post modernism, intertextuality, literature of absurd, philosophy of irony, display of genres, aesthetics of paradox, multilinking of text, double coding of text, destruction of text.

The article reveals the new literary direction called modernism, which appeared at the beginning of the XX century and touches upon its display in the Armenian reality. Separate works of modern Armenian literature representatives are examined and the distinctive features of modernism and post-modernism are underlined. We also tried to touch upon the theoretical tasks of modernism and post-modernism, their role and importance in the development of modern Armenian lyrics.